ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ.

Համայնքը	Միջոցառման անվանումը	օրը	ժամը	Անցկացման վայրը
Գեղասար	Ավագնու արտահերթ նիստ	29.07.2020թ	11:00	Գեղասար համայնքի ղեկավարի աշխատասենյակ (գ.Գեղասար 3փ, 2 նրբ., թիվ 2)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. հուլիսի 29-ին՝ ժամը 11.00-ին Գեղասար համայնքի ղեկավարի աշխատասենյակում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի

ժամը՝ 11.00

1.Գեղասար համայնքի ավագանու 2020թ. հուլիսի 29-ի, 7-րդ արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

2. Հողագրունտի հանույթի իրավունք ունեցող <<Արարատ-Ճանշին>> ՍՊԸ-ը վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

ՆԱԽԱԳԻԾ 33-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
29.07.2020ԹՎԱԿԱՆԻ 7-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Գեղասար համայանքի ավագանին որոշում է .

Հաստատել Գեղասար համայնքի ավագանու 29.07.2020թվականի 7-րդ արտահերթ նիստի օրակարգը.

1. Հողագրունտի հանույթի իրավունք ունեցող <<Արարատ-Ճանշին>> ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

ՆԱԽԱԳԻԾ 34-Ա

ՀՈՂԱԳՐՈՒՆՏԻ ՀԱՆՈՒՅԹԻ ԻՐԱՎՈՒՆՔ
ՈՒՆԵՑՈՂ <<ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ>>
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, 76-րդ հոդվածի 5-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության N 286 որոշումով հաստատված կարգի 44-րդ կետի <<ժգ>> ենթակետը, ՀՀ Կառավարության 2019թվականի մայիսի 10-ի <<Հողագրունտի հանույթի կարգը սահմանելու մասին>> N 572-Ն որոշումով, Գեղասար համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանարապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող, 06-028-0125-0001 կադաստրային ծածկագրով, հողագրունտի հանույթի տեղամաս հանդիսացող 2000քմ մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր առանց մրցույթի, վարձակալության իրավունքով տրամադրել <<Արարատ-Ճանշին>> ՍՊԸ-ին՝ 3000 խոր. մետր ծավալով հողագրունտի հանույթի աշխատանքներ իրականացնելու համար:

2. Հողագրունտի մեկ խոր. մետրի արժեքը սահմանել 300 դրամ:

3. <<Արարատ-Ճանշին>> ՍՊԸ-ի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

4. Վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում: